ԺԳ. ՏԱՐԻ 3748 (Տ.) 24 ՕԳՈՍՏՈՍ 1896 | 12 ՕԳՈՍՏՈՍ 1896 | 14 ՐԼՊԻԻԼ ԷՎՎԷԼ 1314 | ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՆՉ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂԿԷՍ.
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Գալաթիա, Կ. Պոլիս

درعلیه ده غلطه اوده آره‌وك غزته‌سی ادارهسنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

# ԱՐԵՒԵԼՔ
## ՕՐԱԳԻՐ
## Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | |
|---|---|
| Կ. Պոլսոյ համար Տարեկան դրամական արժէք | 150 |
| » » Վեցամսեայ » » | 75 |
| » » Եռամսեայ » » | 40 |
| Օտար երկիրներէ Տարեկան Ժրանմ | 56 |
| » » Վեցամսեայ » | 28 |
| Ընդհանր թուղթի վրայ մասնաւոր տպագր. Տարեկան Օտմ. Ոսկի | 2 |
| Դաւառաց թղթատարի ծախքը միօրինակ Դրուշ | 50 |

Խմբագրութեանս ուղղուած համակ կամ այլ գրութիւն ետ չի տրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Հեռեւեալ տան տպագրական մեքանաներով տպուած
Schiff, Srpek & Comp. à Vienne (Autriche)

## ԶԵՌԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թէեւ շատ դանդաղ կերպով, բայց վերջապէս ծաւալում մը կը գտնէ մեր մէջ արհեստական կրթութեան գաղափարը, տեղ տեղ գործադրութեան նախափորձերով։ Աղջիկները աւելի օգտուած են այս տրամադրութենէն, և քիչ շատ ամէն իգական վարժարանի մէջ ձեռական աշխատանքի դասեր կառնեն, առանց հայուելու այն հաստատութիւնները որոնք արհեստանոցի կը ծառայեն, ուսմունքէ և լեզուներէ աւելի՝ աշակերտուհիներուն սորվեցնելով կար ու ձեւ, ասեղնագործութիւն, գոգոր-է և այլն։ Այսօր, հայ գերձակուհիներ ունինք, նորաձեւութեան բոլոր նրբութիւններուն տեղեակ ու մատներու գերազանց ճարտարութեամբ ու վարժութեամբ օժտուած, որոնք կրնան մրցիլ եւրոպացի առաջնակարգ մոդիստներուն հետ։ Մեծ մասը կօգտուին այդ հմտութենէն, իրա՛ւ է թէ չարաշար յոգնութեամբ, աշխատանքին ու շահուն մէջ առանց համեմատութիւն դնելու։ ասոր պատճառն այն արմատացած սովորութիւնն է որ հայ ընտանիքները օտարին կը մղէ՝ գլխարկի մը, շղարգեսի մը կամ օժիտի մը պատրաստութեան համար, թէեւ [illegible]ոնան որ տանը մէջ քանի մը գործաւորուհիներով հանեստօրէն գործող ազգակից տիկինը կամ օրիորդը կրնան նոյնքան վայելուչ բան մը արտադրել. այսպէս թէ այնպէս, մերիններն [illegible] կ'ապրին սակայն. անոնց մէջ կան [illegible]ր շատ արժանաւոր կերպով պիտի [illegible]նային խանութի կամ գործատուն [illegible]ատատել Բերայի պէս տեղ մը. այս [illegible]տեսակ ձեռնարկութեան մը համար [illegible]անագէտ են, դրամ ալ կրնան հայ[illegible]յթել, բայց եթէ հայ յաճախորդու[illegible]ին շարունակէ չի մտածեսնալ իրե՞ն. այս [illegible]արակայրը կը կասեցունէ զլրենք։ Օր [illegible] պիտի գայ անշուշտ որ այդ նախա[illegible]աշարումն ալ վերնայ։

Բերայի աղջկանց արուեստանոցը, [illegible] երբեմն պատրաստեց դերձակուհեան ու ասեղնագործումեան պերճանքի ճիւղին մասնագէտ աշակերտուհիներ, որոնց ձեռագործներն ընդհանուր սքանչանք պատճառեցին, հիմակ՝ [illegible]ամեատ ծրագրով մը ու համեստագոյն [illegible]հմանի մը մէջ, կ'աւանդէ առանձին [illegible]էտքերու, միջակ դասի ընտանիքներու [illegible] յատուկ գիտելիքներ։ այդ հաստատութեան Տնօրէնուհին քանի մը օր առաջ այս էջերուն մէջէն հրատարակեց [illegible]տալից յօդուած մը Զեռական աշխատանքի [illegible]ի վրայ, յիշելով Ս. Խաչի գաղղոյն [illegible]ը սկզբնաւորութիւն եղած է մանրու աշխատանոցի մը կամ աշկերտուհեան վարժարանի մը հաստատման։ [illegible]կիւտարի ազգայիններուն այս նախաձեռնութիւնն արժանի է համակրութեան. եթէ առ այժմ միայն կոչակոչութիւն կ'աւանդուի, յառաջիկայի մէջ կրնան հետզհետէ աւելնալ ուրիշ արհեստներ։ Օրթագիւղի Թարգմանչաց վարժարանն ալ այս տեսակ սկզբնաւորութիւն մը բրած է։ Տիկին Մատակեան կը յիշէ նաև ուրիշ թաղ մը—Բերա բլլալու է—ուր «չատոնց խորհուրդ կայ մանչոց արհեստագիտական վարժարան բանալու։ Առաջին անգամ չէ՞ որ արձագանգ կը գտնէ այս խորհուրդը զոր կը փափաքինք իրականացած տեսնել գրպրոցական արձակուրդի վերջանալուն, սեպտեմբերի սկիզբը։ Միջոցը քիչ է, առարկուի գուցէ, կամ հասոյթի աղբիւրները սակաւ։ Այս կարգի գործերու մէջ, որքան աւելի երկար խորհրդակցութիւններ կատարուին՝ այնքան աւելի կը ձգձգուի գործադրութիւնը. լաւագոյն չըլլա՞ր պզտիկ սկզբնաւորութիւն մը ընել, Սկիւտարի պէս։ Յարգելի մանկավարժուհին՝ աւելցուցելով թէ Ուսումնական խորհուրդն իր կրթական ծրագրին մէջ դրած է նաև ձեռական աշխատանք, կը հարցունէ թէ ինչո՞ւ չիրագործուիր այս ճիւղը. և միտքերը պատրաստելու ու գործնական ուղղութիւն մը տալու համար առաջ կը բերէ Նուէտի և Զուլիցերիոյ մէջ այս կարգի հաստատութեանց բացման եղանակն ու ստացած զարգացումը։

Նոյն իսկ այդ հակիրճ ծանօթութիւններէն կը տեսնենք որ դաստիարակութեան ու արհեստներու համար այնքան դրամ ծախսող ու այնքան համբաւ շահած այդ երկիրներուն մէջ, բարերարներու պէտք զգացուած է՝ նախակրթարաններու մէջ ձեռարուեստ մտցնելու համար։

Սպասելով որ մեր մէջ ալ արհեստասէր հարուստներ վեհանձն շարժում մը, ինքնաբեր մտածում մը ունենան՝ այս տեսակ բան մը ընելու, լաւ կըլլար եթէ լուրջ ուշադրութեան առնուէր մէկ կողմէ տիկին Մատակեանցի առաջարկը որ է «Ձեռագործ աշխատանքի դասեր» հաստատել ուսուցիչներուն և տեսուչներուն համար, որոնք յեսոյ պիտի սորվեցնեն մանչ տղայոց։ Միւս կողմէ, Բերայի ուսուցիչներէն մէկն ալ տարբեր ծրագիր մը ներկայացուցեր է. այն ալ իր օգտակար կողմերն ունի. մասնագէտներու ձեռքով քննել, ուսումնասիրել տալու է այդ ծրագիրները, և՝ կա՛մ անոնցմէ մէկը կամ երկուքին ձուլմամբ էջեմպլիէն որոշել։ Ինչ օգուտ կունենան այս տեսակ հրատարակութիւններ, եթէ պարզապէս կարդացուելու միայն ծառայեն, վայրկենական ուշադրութիւն մը միայն գրաւելով։

## ԱՆԿԵՂԾՈՒԹԻՒՆԸ
### ԲԱՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ՌԱԼՖՆԵՐՈՒՆ ՈՅԺԷ

Ա.

Մարդկային ամէն արտադրութեանց պէս՝ բառերն ալ չունին ինքնին ոյժ։ Զեղք են։

Բառն՝ իբրեւ ձայն գաղափարի կամ զգացումի՝ ունի այնչափ միայն ոյժ որչափ ունի նկատեալ գաղափարը կամ զգացումը՝ արտասանողին և լսողին ըմբռնողականին ու սիրտին մէջ։

Գրուած բառն՝ իբրեւ կայան տկար գաղափարի մը կամ զգացումի մը՝ դարձեալ ունի նոյնքան ոյժ, սա տարբերութեամբ միայն որ զուրկ է ձայնականին խորհրդաւոր ազդեցութենէն։

Դարձեալ՝ ուրիշ կերպ ըսելով՝ բառերուն ոյժը յարաբերական է, կամ աւելի բացայայտ ըսենք, արտաբերողին ու լսողին իմացական ու բարոյական վիճակին համեմատութեամբն է։

Ազդեալ բանաստեղծին, որ ներշնչումով և իմացական տեսակ մը ինքնին գործունէութեամբ կուլայ իր ձայնը, բառն ունի այն ներքին ոյժն ազդեցիկ, որ անգիտակից ու հոգետես հանճարի արտայայտածն է։

Փիլիսոփային բառը՝ գիտութեան ու հաստատ համոզումի հանգարտ ու խաղաղեալ ոյժն ունի, իւր հիմնաւոր լրջութեամբ ու լայնութեամբ։

Մինչեւ որ կրած չըլլաս անձնուին նշանակեալ գաղափարին կամ առարկային և կամ զգացումին տպաւորութիւնը՝ չես կրնար ըմբռնել արտասանուած բառին նշանակութիւնը։

Եթէ չգիտնաս ձայնին զօրութիւնը, եթէ արտասանողին գաղափարին դէմ կիսով չափ խելամտութիւնը նախապէս ստացած չըլլաս, եթէ զգացումներդ անոր զգացումներուն բաւականապէս մերձաւոր դիրք մը առած չըլլան՝ անոր գանձը տանձ, հուրը ջուր, հոգին չոգի հասկընալու փորձութեան մէջ կիյնաս անվրէպ։

Անկեղծութիւն, ուշադրութիւն, համակիր պատրաստականութիւն մեծ գործ կը տեսնեն բառերուն ճիշդ իմաստն ըմբռնելու մէջ, մինչ՝ ընդհակառակն՝ այլ ընդ այլոյ նկատումներ, անուշադրութիւն, անսիրելութիւն հոգը պատճառներ են բառերու և ուստի իմաստներու թիւր ըմբռնումին։ Եւ ասկէ՝ հերձուած, հեռ և կռիւ։

Մեր խօսքը՝ բառերուն քերականական կամ տրամաբանական զօրութեան վրայ չէ. հոս ալ ուզղակի սիրտն է որ լծոր դուելով բանականութեան հետ՝ կուսայ ու կըմբռնէ բառերուն ճիշդ կշռովը։

Բառերը՝ ճարտարախօսին բերանին մէջ կը դառնան կըլլան յաճախ տեսակ մը պատրաստական հոս ճարպկութիւն։ ճարտարախօսին նկատեալ բանը կը վարէ զանոնք առաջարկեալ դատին պատշաճութեանն ու իր բարոյական ձուլուածին համեմատ, որ բուն բարիէն վար կըլլայ միշտ։ Դատն ըլլայ արդար, ըլլայ անարդար՝ նոյն իսկ Դեմոսթենի մը չուրթերուն վրայ ամենէն ուժգնն կարծուած բառը չունի այն խոր ու լայն ազդումը, զոր ունի Եսայիի մը, Պօղոսի մը, Փոկիոնի մը կամ Կատոնի մը բերանը։ Կայծակն անդամ՝ առ առաւելն վից գիրով ելուզակ մըն է, որ պակի ճառին մէջ անդամ կը պլպլայ ու կանցնի հարիւ կայծի մը չրջմոլութեամբ, մինչ անգին կայծակն ինք իսկ է բառին ներքեւ թաքուցեալ, որ հրոսող ծափով վառելով արտասանողին չուրթերը՝ կերթայ խարել սիրտերու խորերը, ու վառոյժ անդրադարձութեամբ նոյն թափով նորէն դուրս կը պոռթկայ երթալ վառելու ուրիշ սիրտերու խորերն ալ, ուր դեռ կենդանի մնացած է ակզբնական բանին սերմը։ Եւ արդե՞օք այսպէ՞ս յաւիտենական ճշմարտութիւնը կը յաւերժացուցնէ իր ցոլքը մարդկութեան վրայ։

Ել, Ելոհ, Ատոն, Ելիոն, Եհովա՝ սեմ ցեղերուն մէջ տուած է միտ վեհագոյն և անհաղորդական էութեան խիտ գաղափարն այն արագ ներկայացումով, որ սեպհական է այլամերժ ու ներանձնական հոգիներու և որ մարգարէութեանց ու արեւելեան կրօնական բանաստեղծութեանց մէջ բոյն դրած է սքանչելի պարզութեամբ։

Ասոնք՝ Հելլէն ատոստուն և գիւրաշաղորդ միտքերու, նա արիականներուն մէջ անդամ այդ մեծ գաղափարին արտայայտիչ բառերն՝ իրենց ամենաբարձր հրանգներովն անդամ՝ հարեւանցի ու թեթեւ տպաւորութիւն մը կուտան արուեստագէտ, վիպող, նկարագրող, ուրեք ուրեք խանգալից՝ այլ դուն ուրեք վսեմ, որ բացարձակ գարդն է։ Ց. Գ. Մ.

## ՏԻՐԱՑՈՒՆ ՈՒ ԺԱՄԿՈՂԸ

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

Է.

Նա հոտաղներու համար նոգեկալ էր, ահարկու, վտանգաւոր, ինչպէս իմը կապաւի ծագուկներուն համար, ինչպէս օձն՝ սոխակի համար։

Իւր հայրը նոյն էր եղած գեղացւոց համար իր գեղապտութեան ատեն, ինչ որ էր որդին մարգագետիններու մէջ։ Հոր տանը՝ նա սոլորած էր, բիրտ, լիրբ և վայրագ կերպով։ Անոր վարքն ու բարքն ուղղելու, յղկելու համար ոչինչ եղած էր, թոյլատրուած էր նորան՝ անուցանել, արմատացնել այն վատ և անբարոյական կիրքերն, ինչ որ ժառանգեր էր իր հօրմէն՝ Նըզրէէն։

Հոտաղներու բէյլը, այսպէս անուանենք զինք, իրօք փոքրիկ պատուհաս մ'էր անոնց համար։ Նորանք, ուր որ չարժուէին, վտակէ առուակէ անցունելու համար, պարտական էին չալկել և ջրերէն անցունել. նա իւր ոտաց կոչիկներն, տրեխներն դեռ չէր քաշած, ձեռն կամ անձրեւի ժամանակ, և ամէն կը հանարէր իրան։ Իւր տաւարներն, արջառներ, երինջներ, հորթեր և ոչխարներ կ'արածեցնէին, կարգաւ, զրեթէ ամէն մէկն իր ժամն ճանչցած էր. քիթ ուքիրին վրայ պիտի վազէին, ուր որ զրկէր զիրենք նորա հրամանը։ Նա կ'ուտէր անոնց քաղած բանջարեղենաց մնացեալն թարմ, անուշ ու խմրլցոն, իր կեսաւուր հացն ոնէն պիտի բերէին, իր տոպրակը չալկէին, մինչեւ անդամ իր նիհար ու տկար հորթուկները, և ով որ հանդիպէր կը պատժուէր, կը ծեծուէր. խաղի ժամանակ, եթէ անյաջող ելնէր, կամ տարուէր, նա չէր խոնարհէր խաղալեաց կանոնին, հա՛ն ալ կը ճնշէր զանոնք և կը ծեծէր, եթէ համաձայնէին ըսել «դուն տարուեր ես»։

Վարմարն թէև այս խմբակին մէջն էր, սակայն ինքը չէր խառնուեր նըզրէի տղու գործոցը, իր կարգմունքին մինակ նուիրած էր բոլոր ժամերը. այսու ամենայնիւ անտարբեր չէր գործուած լրբութեանց դէմ։

Զրկուած հոտաղները կը զլմէին իրեն, կը գանդատէին, մի և նոյն ժամանակ խնդրելով որ չյայտնէ իրենց տրուածները հոտաղբէսին։

Երկար ատեն այսպէս կ'երթար մեր հոտաղներու վիճակն։ Կային ալ, որ թէև կը նեղուէին չարաճճիէն, սակայն այնքան ահարեկուած էին, որ ոչ միայն չէին դանգատեր, այլ կը յարձակէին անոնց վրայ ևս որք կը յանդգնէին բերան բանալ։

Օր մը սակայն հոտաղ ռէսը, նորանց ամենուն էլ պատժած էր. կէսօրուայ խաղէն յետոյ, նա հրամայեց ամենուն, որ իրեն մէյ մէկ փունջ նորածիլ կանկաբերեն, իւրաքանչիւր օր, և երբ՝ անդամալեալի կերպով ընդդիմութեան հանդիպած էր, ձեռքի խարազանովն մէկիկ մէկիկ ծեծեր էր զիրենք, որք լալ խիստ վաղած էին վարմարին քով՝ դեռատան առջև մէկ փունջի քով, ուր սովոր էր նստիլ վարմարն և երգել ու հանդչիլ։

—Վարմար, քու Աստուծոյ սիրուն, էս կարիճի ձեռքէն ի՛նչ ընենք, մեղի դուր ու դադար չի տար, ըսին միաձայն։

Վարմարն չպատասխանեց։

—Չե՛ս խօսա՞ր, կրկնեցին, եթէ դուն ալ կը վախնաս, էնպէս է, մենք կ'երթանք Համբարի տան հօտաղներուն հետ, անոնք մեզ չեն նեղացներ։

—Վարմար զլուխը բարձրացնելով՝ անոնց ըսաւ, սուտ կը խօսիք։

—Վուա, ըսին տղայք, ամէն կողմէն Գորձելյորոց վկայ, օրտանց կ'ըսենք։

—Ցանցանք ձերն էր պատասխանեց նա, շարունակելով իր կարգմունքը։

—Աղբէ՛ր, կրակ իմկնայ մեր տուն, եթէ իրեն վատ ու դէշ ըսեր ենք, վշվացին անոնք, դո՛ւ չես գիտեր կրիան օձին կընա՞ յսեթել։

—Եթէ դուք չուզէք, նա ձեզ չկրնար վնասել, ասաց Վարմարն բարկութեամբ։

—Խելո՞ք ես, ճվճվացին, մարդ իր աչքն կոյր կ'ուզէ՞, կը վախնինք էլ, չենք ազատիր։

—Էնպէս է, յարեց պզտիկ տէրտէրն, անմօրուք քահանան, դուք ամենդ մէկտեղ երեսս մի՛ տաք, հետը մի՛ խօսիք, իր տաւարները ձեր արօտներուն մէջ մի՛ թողուք, զինք մի՛ չալկէք, մի՛ խարազ հետը, նալէթ տուէք. այն ատեն՝ նա կը հեռանայ, կը փախչի ձենէ, և էլ չմօտենար։

—Խաչօր օղորդ կրսէ, նկատեց հոտաղներու միոն, Ցավիկը, իշկեր՝ էնպէս կ'ենենք, ով որ էտ խօսքից դուրս նիայ, իր պուզային (արու, մեծ գամէշ) պէշը կը կտրենք, ու մեր խոտհնձներէն կը քշենք։

Բոլորն երդուեցան, խօսք տուին, և խրատն կատարեցին։

Հոտաղներու բէսը չուտով փախաւ, չմոռնալով անոնց սպառնալ և հայհոյել։

Այն արօտավարն, ուր Վարմար կ'արածեցնէր իր գառնուկներն, սահմանակից էր Ա. գեղի հողերուն, և այդ երկու տափաստաններն իրարմէ կը բաժնէր գետակ մը, իր ալեկոծ, պղտոր ջրերովն։ Ամառներ, երբ որ գետակին ջուրն կ'ցրտնէր, երկու գեղի հոտաղներ կրնային միանալ միմեանց, ծանօթանալ, խաղեր յօրինել, հէքեաթներ, հանելուկներ ըսել, ու լուծել. իսկ աշուն, գարուն՝ երբեք։ Վարմարը՝ մեր հոտաղներու էն աշխոյժ, անձնեայ, զօրընդդէմ և հնարագէտ ընկերը՝ անոնց ամենէն աւելի լաւ վարժուած էր գետակին յորդ ջրերու մէջ լողալ։ Նա ամեն օր պիտի լուացուէր գետակին ջրովը, իր մամիկն ըսած էր—հազար սուրբի ջուր կայ մէջ գառնո՛ւկ.—լողալով լողալով՝ անոնման լուզորդ մ'եղած էր։

Այն ատեն նա 13-14 տարեկանի մօտ էր, գոտով կարիճ պատանի մը։

ԳԵՂԱՄ

## ՎԵՐՋԱՊԷՍ ՄԵՌԱՒ

Երկուքն ալ արցունք թափելով ու կուրծքերնին ծեծելով կողոքէին, մէկը աջ կողմը Աստուածածնի պատկերին առջեւ, միւսը՝ ձախ կողմը՝ Խաչելութեան։

Իրարու ներկայութենէ տեղեկութիւն չունէին, երկուքն ալ խորունկ հաւատքի մը մէջ ընկղմած էին ցաւատանջ հոգիով, ու միտքերնին որ անհուն էակին բարութեանը չուրջը կը յուսաթեւէր, մերթ կը թռչէր հիւանդ երիտասարդին անկողնին քովիկը ու նուազումի մէջ արձան կը կըսրէին, կամ հառաչանք մը, աղաղակ մը արձակելու բուռն փափաքին զսպել կը ճգնէին։

Ասոնցմէ մէկը հիւանդին քոյրն էր. և միւսը՝ նշանածը։

—

Հիւանդը զգլխոցական մ'է, քսաներկու տարեկան կարիճ մը, ամբէ մը ի վեր անկողնին կապած՝ հոգիւ կրնար գլուխը շարժել բարձին վրայ, ու թշուառ մայրը գաւաթ մը ունի ձեռքը որուն մէջ կը ժողվէ գաւկին հոգիին կտրուանքները որ մէն մի վայրկեանի թթած արիւնի կաթիլներուն հետ գուրս կը թափին։

Երիտասարդը հոգին ձեռքին մէջ տեսնելով «մայր, կըսէ, ես ալ քո՛ւ ձեռքդ կաւանդեմ հոգիս... կամաց կամաց»։ Իսկ մայրը ուժասպառ, զրեթէ ա՛լ անկարող բաժակը ձեռքը բռնելու, վար կը դնէ ու երեսը դարձուցած չլի մ'ալ ինք, աղի ու կարմիր չլի մը արցունքի, կը գլորէ ակոսացած երեսն ի վար։

—

Աղնիւ՝ երիտասարդին նշանածը՝ ընդհատ չարժում մը ըրաւ աղօթքի պահուն։ Երիտասարդ մը մտած էր եկեղեցին, «տանը» հասակը, «տանը» պէս հագուած երիտասարդ մը քովէն անցաւ ու Աղնիւ՝ Գրիգորիկը կարձելով քիչ մնաց ուրախութեան յուզուած աղաղակ մը պիտի արձակէր և պարանոցին փաթթուէր, եկեղեցիին մէջ, հոն՝ ուր կը յուսար օր մը ձեռք ձեռքի ու գլուխ գլխի տալ։

Եւ յանկարծ տեսաւ սեւեր հագուած տխուր ու մտազբաղ օրիորդ մը, «Ա՛հ, հառաչեց, Անիկն է... ան չէ՞... այո՛, Անիկն է, ան է, ինչպէ՞ս չեմ տեսեր զինքը»։ Մրմնջեց ու մտանելով թեւէն բռնեց քաշեց, տարաւ հետը խորանին առջեւ. «Եկուր, եկուր, մէկեղ աղօթենք, մէկեղ լանք եկուր»։ ըսաւ ու սարսուռ մը կանցնէր երկուքին մարմինին վրայէն։ Անիկ շուարած և անդիտօրէն կը հակակերպէր անոր անդադար լալով։

—

Գրիգորիկ ա՛լ սկսած էր ատել ամէն բան, սենեկին առջեւ պարզուող ծովը սարսուռի ու գիմացի ժայռերը գերեզմանոցի տպաւորութիւն մը կը թողէին վրան, չոգենաւերու սոյլը Գալաթիէի փողն էր, ու ամէն ձայն խորունկ գերեզմանէ մը կուգար կը հասնէր իր ականջին։

Դառնալով մօրը՝ հարցում մը ըրաւ, որ անոր Ջիգերը ցնցեց և վերիվայր յուզեց սիրտը, «ուր է ըսաւ, քոյրս»

—Եկեղեցի...

—Գիս մինո՞ւկ կը թողու վերջին վայրկեանիս...

—Զաւա՛կս, քեզի համար աղօթելու գընաց, մամ պիտի վառէ քեզի համար։

—Ժամավաճառութիւն է, մրմնջեց ջրթունքներուն ծայրովը և աչքերը փակեց։ Ա՛լ չեր շնչեր։

Խ. ՍՄԲԱՏ

---

=)( 7 )(=

ԹԵՐԹՕՆ «ԱՐԵՒԵԼՔԻ»

## ՀԱՆՐԻ ԿՐԷՎԻԼ

# ԳԱՂՏՆԻՔ ՄԸ

Տան ճեպ ճերմակ պարեգօտ մը հագած, վանդի ապարանքին մէջ բնաւ սեւ հագուստ չունէր, ձեռնամած, անձկագին արտայայտութեամբ մը, կը նայէր անոր որ իր ամուսինն եղած էր միմիայն աշխարհի առջեւ։ Ինչո՞ւ հոն էր, այդ ժամուն ուր առանձին գտնուելու էին իրենց համար պատրաստուած բոյնի մը մէջ։ Լալոգին գոլովանք մը կը բարձրանար շուրթերուն և աչքերուն։ հոն տեսնելով ան զոր իբրև ամուսին ընդունած էր՝ զայն երջանիկ տեսնելու այնքան մեծ փափագով, սիրոյ փոխարէն սէր ցուցնելու այնքան անկեղծ դիտումով, երբ իր տակաւին վակ սիրտը վերջապէս բացուէր։

—Ցանցանքն իմս չէ, կըսէր ինքնիրեն, եթէ այլապէս չսիրեցի զինքը... Չէի կըրնար։ Ինծի համար սիրելի բարեկամ մըն էր,—չեմ գիտեր թէ պիտի կրնա՞ի սիրելի տարփաւոր մը ըլլալ... Կրնաս բարի, սիրալիր ու հաւատարիմ ըլլալ ամուսնիդ առանց տրիսի զգալու անոր նկատմամբ։—Անշուշտ ես տարփանքի համար չեմ ստեղծուած։ Եւ սակայն, ապահով եմ, երջանիկ կեանք մը պիտի ընէի իր կեանքը։

Պընուսի քայլերուն խղդուկ աղմուկը իր երազանքէն սթափեցուց զինքը։ Արդեն տասն անդամ իրեն զիմած էին հրաման խնդրելու, վանդի տիկին Մոնքլար, ոգեսպառ, անկարող էր պատասխանելու։

—Պահ մը կը հաճի՞ք գալ, տիկին, ըսաւ Պընուսի ցած ձայնով։

Ոտքի ելաւ և անոր հետեւեցաւ տեսակ մը զղուանքով. եղանակը որով անիկա զինքը քննած էր դիակին մօտ, անախորժ տպաւորութիւն մը թողած էր իր վրայ։

Երբ նրբանցքներէն կառաջնորդէր ան, Էմիլ կեցուց զայն։

—Այն սենեա՞կը կերթանք, հարցուց։

—Այո, տիկին։ Փոխանորդը կուզէ տեղեկութիւն մը խնդրել ձենէ։

—Երթանք, ըսաւ մանկամարդ կինը հանդարտօրէն։

Ներս մտաւ. Պոլվէն ապրեցաւ մնաց անոր գեղեցկութենէն, վայելչութենէն, վսեմ պերճութենէն, և յարդանօք խոնարհեցաւ անոր առջեւ. չիպ չիտակ սպասեց, առանց տեսնելու իրեն հրամցուած աթոռը, ստիպելով որ ան ալ ոտքի կենայ։

—Ներեցէք, տիկին, ըսաւ դատաւորը. մէկ բան մը պիտի հարցունեմ ձեզ... առ այժմ։ Հեռուէն կամ մօտէն, ընկերային դասակարգին վերին կամ ստորին աստիճանին վրայ, մէկը որ բնակի կամ ապրի կաններ ունենայ Լաֆալի մէջ։

—Լաֆալ։

—Այո, կամ չրջակաները։ Ադեկ վնասուելով յիշողութեանը մէջ, յետոյ Պոլվէնի երեսն ի վեր նայելով ըսաւ.

—Ոչ, պարոն, այդ քաղաքին մէջ մէկը չեմ ճանչնար։ Երբէք հոն գացած չեմ։

—Շատ լաւ, տիկին, շնորհակալ եմ։ Այսչափ, ըսաւ փոխանորդը ողջունելով։

Տիկինը դուրս ելաւ գլխի խոնարհութեամբ մը։ Երբ հեռացաւ, Պոլվէն Պընուսին նայելով ըսաւ.

—Այն նամակը որ անձնասպանութեան պատճառն եղաւ, անպատճառ յայտնութիւն մըն էր տիկին տը Պօրանի դէմ։

—Զրպարտի՞չ յայտնութիւն մը, հարցուց Պընուսս։

—Այնպէս կը յուսամ, ըսաւ Պոլվէն ցրտութեամբ։

Ե

Բովանդակ Բարիզ որ առջի օրը ներկայ գտնուած էր հարսանեկան արարողութեան, արթննալով իմացաւ Պօլսն հարիւրապետին մահը։ Առտուան մեծ լրագիր մը, կէս գիշերուան իմանալով ապէսը, առաջին էջին մէջ իր ընթերցողներուն ներկայացուցած էր զայն։

Թէատոր Պընուսս շատ բաներ մտածած էր, բայց միտքն չէր, անցուցած գոցել տասերկուքի չափ ծառաներու և նոյնքան ալ զանազան զործերու յատկացուած ստորակարգեալներու բերանը։

Այս անդադանապահութեան արդիւնքը շանթահարիչ եղաւ։ Պօլսն, առտուն ադեցէք։

Էմիլ ծռեց գլուխը, խղճմտօրէն փնտռելով յիշողութեանը մէջ, յետոյ Պոլվէնի երեսն ի վեր նայելով ըսաւ.

—Ոչ, պարոն, այդ քաղաքին մէջ մէկը չեմ ճանչնար։ Երբէք հոն գացած չեմ։

—Շատ լաւ, տիկին, շնորհակալ եմ։ Այսչափ, ըսաւ փոխանորդը ողջունելով։

Տիկինը դուրս ելաւ գլխի խոնարհութեամբ մը։ Երբ հեռացաւ, Պոլվէն Պընուսին նայելով ըսաւ.

—Այն նամակը որ անձնասպանութեան պատճառն եղաւ, անպատճառ յայտնութիւն մըն էր տիկին տը Պօրանի դէմ։

—Զրպարտի՞չ յայտնութիւն մը, հարցուց Պընուսս։

—Այնպէս կը յուսամ, ըսաւ Պոլվէն ցրտութեամբ։

Ե

Բովանդակ Բարիզ որ առջի օրը ներկայ գտնուած էր հարսանեկան արարողութեան, արթննալով իմացաւ Պօլսն հարիւրապետին մահը։ Առտուան մեծ լրագիր մը, կէս գիշերուան իմանալով ապէսը, առաջին էջին մէջ իր ընթերցողներուն ներկայացուցած էր զայն։

Թէատոր Պընուսս շատ բաներ մտածած էր, բայց միտքն չէր, անցուցած գոցել տասերկուքի չափ ծառաներու և նոյնքան ալ զանազան գործերու յատկացուած ստորակարգեալներու բերանը։

Այս անդադանապահութեան արդիւնքը շանթահարիչ եղաւ։ Պօլսն, առտուն ութ օր ամեն խօսակցութեանց նիւթ ըլլալու սահմանուած էր, ինչ բախտ կարենալ ըսել. «Նախ ես տեսայ զինքը։ Ցանկարծ տիկին տը Բոլրէյ կը յիշէ թէ իր այցելութեան պատուակն էր մայրական հոգածութիւն մը. և բազուկները բացաւ։

—Սիրելի աղջիկս, ըսաւ, ինչ սոսկալի վիճակ ձեր վիճակը։ Այս տան մէջ ուր վերջապէս բոլորովին օտար կը սեպուիք, բարեկամուհիի մը պէտք ունենալու էք, որուն կարենաք ձեր սիրտը բանալ։ Համբուրեցէք զիս, աղջորիկս։

Բայց աղջորիկը ամենեւին փափագ չէր զգար սրտագեղում ցոյց տալու։ Համբուրեց սակայն տիկին տը Բոլրէյը՝ երախտագիտութեան պատշաճ չափով մը, և տեսնելով որ տեղի չէր տար, Միկինթոշ մը հըրամցուց։

—Ձեր սենեա՞կն է, հարցուց պարոնուհին, շուրջը նայելով։ Շատ աղէկ է, շատ աղէկ... Քիչ մը մութ են սա գորգերը... Ես կապոյտ ու արծաթագոյն սենեակ մը ունէի, բայց ես խարտեաշ եմ։ Ըսէք նայիմ, Էմիլէ, ինչպէս պատահեցաւ։ Դիտէք թէ կրնաք վստահութիւն ունենալ վրս, գեղեցմանի պէս համբ եմ։ Ներկա՞յ էիք։ Խե՛ղճ աղջիկ, արդեօք ա՛րչափ տառապեցաք։

—Հոն չէր, պատասխանեց Էմիլէ կըրուկ կերպով։

Առջի օրուընէ ի վեր արդէն սորված էր թէ ըստ կարի քիչ խօսելու է. դատաւորին հետ իր կարճ տեսակցութիւնը իր մէջ արթնցուցած էր խոհեմութեան ընդդդներ զորս երբէք չէր զգացած։

—Ուրեմն մինո՞ւկ էր, յարեց տիկին տը Բոլրէյ։ Խե՛ղճ։ Բայց ինչո՞ւ զգչիլ այդ տարճանակներուն։ Ինչ անխոհեմութիւն։ Եւ յետոյ, խօսքը մէջերնիս, չէ՞ք մտածեր որ սպայ մը պարտաւոր ըլլայ տասնկ զենքերու վտանգը գիտնալ՝ զերծ մնալու համար... Չէ՞ք մտածեր, ըսէք։

—Ես բան մը չեմ գիտեր, պատասխանեց Էմիլէ նեղանալու ձեւով մը։ Այդ կարգի գաղափարներու մէջ չեմ կրնար մտնել։ Մէկ բան մը միայն գիտեմ, թէ ետրէկ ամուսնացայ, կէս օրէն ժամ մը ետքը, և թէ իրիկուան ժամը վեցին այրի էի։ Էն ուժգն ցիրկրն անդամ կը ցնցուին։ կը խոստովանիմ, սիրելի տիկին, թէ սաստկ սպառած եմ։

—Կը հակնամ, ըսաւ պառոնուհին առանց չարժելու։ Խեղճ սիրելի աղջիկս, գէթ կրցի՞ք լալ։

—Երբ վիշտ ունենամ, ըսաւ Էմիլէ, չեմ լար։

—Սակայն աչքերնիդ շատ խորը իջեր են։ Սոսկալի՛ բան։ Իսկ տիկին Մոնքլա՞ր ինչ կըսէ այս մասին։

—Սարսափահար եղած է. կը վախնամ որ չաղէկնայ։ Բարեբախտաբար, Ռէյմոնի մէկ բարեկամը կար որ ամեն բան վրան առաւ...

—Ատիկա երանութիւն մըն է արդարեւ։ Երկու կիներ առանձին, ի՞նչ պիտի ըլլայիք, Աստուած իմ։ Եւ ի՞նչ պիտի ընէք։

—Չեմ գիտեր։ Մտածելու ժամանակ պէտք է մեզ։

—Անշուշտ, անշուշտ, վերջապէս հիմակու

Կ. ՊՈԼԻՍ, ՕԳՈՍՏՈՍ 12/24, 1896

# Քաղաքական կացութիւն

## ԶԱՐԻՆ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Քրիստոնեական եկած հեռագրեր ու նամակներ Զարին ու Զարուհւոյն առաջիկայ ճամբորդութեան նկատմամբ անատուգութիւն կը յայտնեն։ Զարուհին յոգնութենէ կը դանդաղի։ Արդէն շատ ուժեղ չէ, և ինք որ Ռէնի երկրին մէջ այնքան հանգարտ կ'ապրէր, ամուսնութենէն ի վեր այնքան յուզումներ կրեց որ քանի տարուան փորձառութիւն ստացած կ'երևի մէկ տարուոյ միջոցին։ Թագաւորութեան հանդէսն ինքնին յոգնեցուցիչ ըլլալ զատ, Թոտինգրոյի հրապարակին ծանօթ արկածն իւր մարմին վրայ անջինջ տպաւորութիւն թողած է։ Զարն այնքան հոգածու է Զարուհւոյն առողջական վիճակին որ Եւրոպայ չըլլանն առնոր ընել պիտի չտայ մինչև որ ապահով չըլլայ թէ առողջութիւնը բաւական է տակաւ այնպիսի ճամբորդութեան մը յոգնութեան։—Զարին ի Փարիզ այցելութիւնն անցեալ ուրբաթ Փարիզի երեկոյեան լրագրերուն մէջ պաշտօնապէս ծանուցուեցաւ՝ իբրև արդիւնք նոյն առաւօտեան նախարարական խորհրդոյ։ Պաշտօնական զեկուցումը կ'ըսէր. «Արտաքին գործոց նախարար Մ. Հանոթօ ծանոյց նախարարական խորհրդին թէ ռուս գործակալ Մ՝ ոը կոչու պաշտօնապէս ծանուցած է իրեն թէ Վեհ. կայսրն Ռուսիոյ, Հանրապետութեան Նախագահին կողմէ իրեն ուղղուած հրաւէրն ընդունելով, Փարիզ պիտի այցելէ Հոկտ.ի սկիզբը։ Կայսրն ու Կայսրուհին, Անգլիայէն գալով, Շէրպուռ ցամաք պիտի եկեն։ Հանրապետութեան Նախագահին ըլլալիք այցելութիւնը պաշտօնական հանդամանք ունենալով, կառավարութիւնն ինք պարտականութիւն կը ստանձնէ տնօրինելու պէտք եղած միջոցներն ի կարգադրութիւն արարողութիւններուն և հանդէսներուն որք տեղի պիտի ունենան կայսրը և կայսրուհւոյն ի Ֆրանսա ներկայութեան առթիւ։»—Թէ՛ լիքը Ֆօռ Փարիզ Շէրպուռ պիտի ուղեւորի կառավարով մը զոր մահճարձակառավարոց ընկերութիւնը պէտք է Փարիզի շուրջը բանող Գոտի երկաթուղւոյն տնօրէնութեան ներքև դնէ, Սեպտ. 12ին (Ն. Տ.) պատրաստ ըլլալու պայմանաւ, որպէս զի արարողապետները ժամանակ ունենան աչքէ անցուցանելու և պակասները լրացնելու։ Ի Շէրպուռ Նախագահը պիտի երթայ Տէ-բէ-ի որ Լէ՛ զրահաւորն, որով Մանշի ծովուն մէջ ընդ առաջ պիտի երթայ Զարին երբ ռուս նաւատորմին ընկերակցութեամբ դայ Պալմորըլէ (սկզբնական դղեակ Թագուհւոյն)։ Որովհետև Զարին և Զարուհւոյն ի Փարիզ գալատեան պատրաստութիւնք Գոտիի երկաթուղւոյն վարչութեան յանձնուած են, կը մակաբերուի թէ Փարիզ պիտի մտնեն այնպիսի ճամբով մը որ Գուլվառներուն մեծագոյն մասէն անցնին, և ժողովրդեան առաւելագոյն թուոյ մը կողմէ ողջունուին։ Այն յայտարարութիւն թէ Ֆրանսական կառավարութիւնն ինք կը ստանձնէ պատրաստութեանց բոլոր պատասխանատուութիւնը՝ չի նշանակեր թէ ժողովուրդը պիտի արգիլուի իւրանդամութիւնն արտայայտելէ, և Ֆրանսացիք անհամբերութեամբ մեծամեծ ծախքեր պիտի ընեն իրենց տունները զարդարելու և լուսաւառելու։ Բայց զրահանդէսն, Օրիրայի հանդիսական ներկայացումը, հանրային շէնքերու այցելութիւնք, հրախաղութիւնք և մեծ ընդունելութիւնք ամենքն ալ կառավարութեան կողմէ պիտի կարգադրուին։

* *

### ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ՌՈՒՍԻԱ

Հեռագրաց մէջ երևցաւ որ յորմէ հետէ յայտնի եղաւ Զարին ոչ միայն Վիեննա և Անգլիա այլ և Փարիզ այցելու մտադրութիւնը, Պերլինի մամուլն հոգ կ'ընէր որ մի՛ գուցէ զանց ընէ զՊերլին և միայն գերմանական բանակատն այցել բաւ համարի։ Հիմա Բէօ-Ինէ Զայտոնէ այսպէս գրող Պերլինի թերթերը կը պախարակէ, կէս-պաշտօնական յօդուածով մը այս կարծիքն յայտնելով թէ երբ Ռուսիոյ Կայսրը գերման Կայսեր կ'այցելէ անոր բանակին մէջտեղ, պաշտօնական արարողութիւններու և զինուորական հանդէսներու առթիւ, տարօրինակ դժուարահաճութիւն կ'ըլլայ թերութիւն մը նշմարել այսպիսի այցելութեան մէջ։ Ո՛չ ուրիք գրուած է, ո՛չ ալ աւանդական սովորոյթ մ'է որ գերման Կայսեր հիւրերն իրենց այցերը Պերլինի մէջ կատարեն։ Արդէն Զարին ու Զարուհւոյն ի Սիլեզիա այցելն և ոչ Պերլին՝ մամանակատութեան արդիւնք է, զի եթէ Ռուսիոյ վեհապետը Պերլին գալիք ըլլար, Վիլհէլմ Կայսր աշնան համար ըրած բոլոր կարգադրութիւնք կ'աւրուէին, որովհետև աշնան Սիլեզիա դտնուելու և հոն գերման բանակին տարեկան մեծ ռազմախաղերը դիտելու և տնօրինելու համար ի վաղուց կարգադրութիւններ ըրած է։— Բէ՛ինէ Զայտոնէ այս ներշնչեալ խօսքերէն կը հասկցուի թէ Զարն և Զարուհին մտադիր չեն Պերլին գալ։ Եթէ Վիեննա, Փարիզ, Պալմորըլ երթալէն եաքը Զարն ու Զարուհին Պերլին չգան, Բէ՛ինէ Զայտոնէի պաշտօնական բացատրութիւններուն հակառակ, Գերմանք ոչ սակաւ պիտի տրտնջան, կ'ըսուի միւս կողմէն։

ԻՏԱԼԻԱՆ կառավարութիւնն 30,000 զօրք կը պատրաստէ ի հարկին Հապէշստան զրկելու համար, ի զգուշութիւն այն պատահականութեան դէմ որ Հոկտ. ամսուն մէջ վերջնական խաղաղութիւն չկարենայ կնքել, և Հապէշներն այս անգամ յարձակողական սկսին։ Եմենիկիոյ իտալական գաղթական պաշտօնէութեան հրաման զրկուեցաւ պէտք եղած ուտեստը պատրաստ ունենալ այն թուականին։

ԵՐԿՈՒ ԾԵՐՈՒԿՆԵՐԸ.—Անցեալ շաբաթ օր Լի-Հունկ-Զանկ յատուկ կառավարով Զեդքը դնաց, անտի կառավարով Հարբին, ի տեսակցութիւն կատարելու։ Թէև անդ՝ նախկին վարչապետը տասն տարու աւելի մեծ է քան չինացի փոխարքան, բայց անկէ աւելի գործունեայ կ'երևէր, խօսակցութիւնն աւելի վառվռուն էր, և յայտնի է թէ անկէ աւելի մարդանք կ'ընէ ամեն օր, և անկէ աւելի միտք կը յղնեցնէ իւր դրական աշխատութեանց պատճառաւ։ Երկար խօսակցութիւն մ'ունեցան, գլխաւորապէս քաղաքական գործերու վրայ։ Կառքով եկած և դացած պահուն Լի սիրալիր ընդունելութիւն դտաւ շրջակայ ժողովրդէն։ Անցեալ կիրակի զուարճական պտոյտ մ'ըրաւ Ուինբրիկը լիճը։

ԻՏԱԼԻԱ ԵՒ ԶՈՒԱՆՈՐԱ. — Եւրոպոյ ամէն վեհապետք և Ֆրանսական Հանրապետութեան Նախագահը խնդակցական հեռագրեր զրկեցին Սեւ Լերան Նիբոլա իշխանին՝ անոր աղջկան նշէն իշխանուհւոյն Նարբոնի իշխանին հետ նշանախօսութեան առթիւ։ Իտալեան քաղաքապետութիւնն ալ շնորհաւորական հեռագրեր զրկեցին Զէդինեէ։

Մ. ՄԷԼԻՆ ֆրանսայի վարչապետն հիւանդացեր է։

Մ. ԱՆՏՐԷ Շուեյտացի օդանաւորդն ետ կեցաւ իւր ահագին օդապարիկով Հիւսիսային Բեւեռն երթալու խորհուրդէն։ Ուրեմն, անոր անցքին ի զուր պիտի սպասեն հիւսիսային երկրայ ընակիչներն, որոց ամերիկեան, քանատեան, ռուսական, շուեդական և նորվեկեան կառավարութիւնք շրջաբերականով պատուիրեր էին ուշադրութիւն ընել և եթէ այնպիսի մեծ օգտակարիկ մը տեսնեն, լուր տալ կամ օգնել՝ ի հարկին։

ՍՊԱՆԻԱ ԵՒ ՄԻՍՅ. ՆԱՀԱՆԳԻՔ.—Ուաշինկդընի կառավարութիւնը կարեւորութիւն տալ չի թուիր այն լուրին թէ Սպանիոյ կառավարութիւնը գրամական մեծակալ հատուցում պիտի պահանջէ Ամերիկայէն՝ Բուպա կամաւոր, զէնք ուռազմամթերք զրկուելուն առթիւ։ Կարծուի թէ այս սպառնալիքն ընելով Մադրիտի կառավարութիւնը կ'ուզէ առաջքն առնուլ նորանոր օգնութեանց որք ճամբայ պիտի հանուին Մ. Նահանգներէն։ Բայց ամերիկեան կառավարութիւնը կ'ըսէ թէ ինք պարկեշտօրէն ամեն միջոց ի գործ դրած է կամաւորներու և օգնութիւններու առաքումն արգիլելու համար, երբ կանխաւ լուր տրուած է իրեն։ Արդէն 1885ին Մր. Պայարտ, Մ. Նահանգաց արտաքին գործոց նախարարը, պաշտօնապէս յայտարարած էր սպանիական դեսպան Ս. Պալէրայի թէ կամաւորներն և օգնութիւնները դանել և մատնանիշ ընել Սպանիոյ կը պատկանի։ Եթէ Սպանիոյ կողմէ մատնանիշ ըլլալէն ետքն ամերիկեան կառավարութիւնը կարելի ի գործ չդնէ անոնց մեկնումն արգիլելու համար, պատասխանատուութիւնն այն ատեն կը ծագի։ Անգլիա Ալոֆոյի խնդրոյն մէջ պատասխանատու եղած էր, զի Հիւսիսայնոց դեսպանին կողմէ իրեն եղած զեկուցման համեմատ չէր գործած։

ՁՕՐ. ՎԱԼԻՍ (և ո՛չ թէ Զօր. Հէօշ) խաղեան կառավարութեան կողմէ լիազօր պատգամաւոր պիտի երթայ, Մենելիք թագաւորին հետ հաշտութեան համար բանակցելու։

ՖԻԼԻԲԷՆ կղզեայ ընիկները, մասմը Սպանիացւոց հետ միացած, ապստամբեցան սպանական իշխանութեան դէմ։ Ասիկա Մադրիտ ծանոյց Ֆիլիբեան կղզեայ սպանիացի կուսակալն ինքը։ Կառավարութիւնն ալ անոր հեռագիրն հաղորդելով ի Խորհրդարան, յայտարարեց թէ ապստամբութիւնը չսաստկանալու համար պէտք եղած միջոցները փութով պիտի տնօրինուին։ Բուպայի խնդրոյն վրայ Ֆիլիբեան կղզիներուն խնդիրն ալ աւելնալով, ոչ նուազ զբաղում պիտի պատճառէ Մադրիտի կառավարութեան։ Ֆիլիբեան աբքիպեղագոսին բնիկներն ստէպ կ'ընդվզին սպանիական իշխանութենէն որ արդէն շատ զօրաւոր չէ այն հեռաւոր կղզիներուն մէջ։

ԲՈՒՌՆ ՓՈԹՈՐԻԿՆԵՐ վերջին օրերս տեղի ունեցան Հարաւ. Ֆրանսայի և Իտալիոյ այլ և այլ կողմերը։ Սաստիկ տաքերէն ետքն յորդառատ անձրևներ եկան՝ բուռն մրրիկներու հետ օրք շատ չէնքեր կործանեցին թէ քաղաքներու և թէ գիւղերու մէջ, գետեր յորդեցան և շատ մը դաշտօրայք ջուրերուն տակ ծածկուեցան։

ՌՈՒՄԱՆԻՈՅ մէջ օրուան խնդիրն է հետեւեալ զայթակղական դէպքը.— Բանի մը շաբաթ առաջ դեռատի հարուստ աղջիկ մը, Օր. Եոանիտա, նչանուեցաւ Պուքրէշի մէջ հաստատուած հանրածանօթ ճարտարապետի մը։ Որովհետև կէս միլիոն ֆր. դրամագիտ ունի, ժան Ֆուրժոն անուն անձն աչք տնկեց դրամին, խորհեցաւ առեւանգել աղջիկն, այն յուսով որ գայթակղութեան առաջքն առնելու համար աղջկան ծնողք կը հաւանին իւր ամուսնութեան։ Ֆուրժոն ընտանիքն այս խորհրդին հաւանեցաւ, և ժանի քսյրեր մին, Օր. Ռոզա, որ Օր. Եոանիտի բարեկամներէն էր, մեղսակից դերն ստանձնեց։ Համոզեց օրիորդն իրեն հետ պտոյտի ելնելու մոտակայ անտառի մը մէջ։ Ֆուրժոն կառքով կը սպասէր։ Օրիորդը բռնեցին, կառքին մէջ դրին, և ակնոց չկախելով աղջկան աղտղակներուն և ընդդիմութիւններուն, Ֆուրժոն ի Տիման իւր գեղջկական բնակարանը տարաւ ազիկն։ Սոր անհետացումը չուտով դիտուեցաւ և իմաց տրուեցաւ ոստիկանութեան։ Որովհետև Օր. Ռոզա անհետացող աղջկան հետ էր, ոստիկանութեան կասկածները կեդրոնացան Ֆուրժոն ընտանիքին վրայ։ Տիմանի գիւղային տունը կոխուեցաւ։ Ի սկզբան ժան Ֆուրժոն ոստիկանութեան թող չտուաւ ներս մտնել, բայց երբ ոստիկանութիւնը դուռը կոտրեց ներս մտաւ, ժան անտառ փախաւ։ Սենեկի մը մէջ Օր. Եոանիտ գտնուեցաւ ահաբեկութենէն զրեթէ խելայեղ, երեսները սկըրտուած, հագուստները պատառ պատառ, իբրև հետեւանք իւր կատաղի պայքարին իւր անզգամ առեւանգողին հետ։ Աղջիկն ազատելէն ետքն, ոստիկանութիւնն անտառին մէջ չարաքսնչ հլածեց, և երկար փնտռտուքէ մը ետքը գտաւ ձերբակալեց, ինչպէս և անոր մայրն և քոյրն, որք Պուքրէշ տարուեցան ու բանտարկուեցան։ Երկու կողմերուն հարստութեան և ընկերային դրեց կարեւորութեան պատճառաւ, այս գայթակղական գործ ոստիկի հետաքրքրութիւն կը շարժէ Պուքրէշի և բովանդակ Ռումանիոյ մէջ։

# ՀԵՌԱԳԻՐ

## ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

ԼԻ ՀՈՒՆԿ-ԶԱՆԿ

ԼՈՆՏՈՆ, 22 Օգստ.—Սէր Լոռէ. ամերիկեան շոգենաւով Լի-Հունկ-Զանկ այսօր ճամբայ կեաւ դէպ ի Միաց. Նահանգներն, ուտեց Բանտայի և Ճաքոնի ճամբով պիտի դառնայ Չին։

ԻՏԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՀՌՈՄ.—Կառավարութիւնը Խորհրդարանն պիտի խնդրէ կրկնապատիկ տարեկան եկամուտ Նեբուլիի իշխանին, որպէս ամուսնութիւնն ի մտոյ պիտի կատարուի։

—Զօր. Վալիս սեպտ. 10ին պիտի մեկնի Մեսլնայէ՝ հաշտութեան համար բանակցութեան երթալու Մենելիքի քովն։

ՍՈՒՏԱՆԻ ԱՐՇԱԻԱՆԸԸ

ԳԱՀԻՐԷ.—Ֆրանսական Գործակալութիւն մը կը հեռագրէ թէ Տոնկոլայի վրայ արշաւանքին պատրաստութեանց համար ցարդ յիսուն միլիոն ֆր.ի աւելի ծախք եղած է։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՔՈՄԷՐՍԻ.— Տեղւոյս երեսփոխան և նախկին նախարար Մ. Բօէնքառէ այսօր մեծ ճառ մը խօսելով, Մ. Հանոթոյի արտաքին քաղաքականութեան շատ հաւանեցաւ։ Ցանձնարարեց ամեն կառավարական հանրագիտակներուն, որ համախմբին միանան վարչապետ Մելինի շուրջ, որոյ իմաստուն քաղաքականութիւնը պիտի նուիրագործուի ի մտոյ Զարին այցելութեամբ, որ մեծ կարեւորութիւն ունեցող դէպք մ'է։ Մ. Բօէնքառէի ճառը բաւ ընդունելութիւն դտաւ։

ԾՈՎԱՑԻՆ ԱՐԿԱԾՔ

ՐԻՕ-ԵԱՆԷՅՐՕ.—Արժանդինի ծովեզերքէն 400 մղոն բացն ընկղմեր է Վիլէյրոյէն-ֆէլտ շոգենաւն, և 14 հոգի խեղդուեր են։

ՏԳԳ. ՃԷՅՄՍԸՆԻ ԽՆԴԻՐԸ

ԼՈՆՏՈՆ.—Բանտին մէջ Տրդ. Ճէյմսը կը զբաղի մանրամասն մէկ պատմութիւնը զրելու Թրանսվալի դէպքերուն որոց մէջ ինք մաս ունեցած էր։

ԱԼԵՔՍԱՆԴՐ Գ.

ԲԵՌԵՐՍՊՈՒՐԳ. — Երէկ ի Զարսքոյէ Սելօ տեղի ունեցաւ բացումն այն յիշատակարանին որ կառուցուած է ի պատիւ Ա-լեքսանդր Գ.ի, հայր Նիքոլա Բ.ի։

Բերայի կիրակնօրեայ առեւտրական վարժարանը, նոյնպէս Էսատեան վարժարանի մէջ մասնաճիւղիս վերաբերող դասերը պահելով հանդերձ՝ տրամագրելի ժամանակ կունենամ ուրիշ թաղերու ուսանողաց ալ աւանդելու հետեւեալ կարեւոր դիտելիքները.

Վաճառականական առմոնք,
Տամարական-Բիւ—, —պարզ և բրնկնակ—
Առեւտրական հաշուապետարիւն և
Թղթական գրագրութիւն։

Պէտք ունեցող վարժարանաց հոգաբարձութիւնք կամ տնօրէնք հաճին հաղորդել տեղ իրենց հրամանը։ Հասցէ՝ Էսատեան վարժարան, Բերա. կամ Պահճէ Գարու Զ. Թորոսեան գրատունը։

5—5 ՅԱԿՈԲ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

# ԱՋԳԱՅԻՆ

## ԼՈՒՐԵՐ

Առժամանակեայ Խառն Ժողովն այսօր ի նիստ կը գումարի Ղալաթիոյ Ժողովարանին մէջ՝ Նախագահութեամբ Պատրիարքական Տեղապահ Սրբազանին։

Առժամանակեայ Խառն Ժողովոյ որոշմամբ՝ մայրաքաղաքիս եկեղեցեաց քարոզչաց և Թաղ. Խորհրդոց ու Դաւառ. Առաջնորդաց ուղղուած է հետեւեալ Շրջաբերականն, որ Ազգ. Պատրիարքարանի կողմէ հաղորդուած է մեզ ի հրատարակութիւն.

Առժամանակեայ Խառն Ժողովոյ այս օրուան նստին մէջ տրուած որոշման համաձայն՝ կարեւոր դատեցինք հաղորդել Ձեզ այն բարձր խօսքերն, որք մեր Օգոստափառ Կայսեր շրջանէն բղխած՝ հաղորդուեցան մեզ, երբ գացած էինք ի կայսերական պալատն՝ յաս դահոյից Նորին Վեհափառութեան մատուցանելու մեր շնորհակալիքն, Տեղապահական պաշտօնին հաստատութեան առթիւ։

Ահաւասիկ Նորին Վեհափառութեան բանախօսութիւնը.

«Իսպանիոն ու Հայերն արժանայիշատակ Սուլթան Օսմանի օրէն ի վեր իրերաց հետ իբրեւ եղբայր կենակցեր էին։ այս վերջին ատեններս որ և է կերպով անոց մէջ յառաջ եկած այնքան ցրտութիւնը ինձ մեծ վիշտ պատճառեց։ Իսկ վերջին ընտրութեամբք Հայոց ազգն հաստատեց թէ՝ չար դիտաւորութիւն մը չունի։ Տեղապահը թող ջանայ Հայոց և Իսլամաց մէջ վարեմի սէրն ու հաւասարութիւնը վերահաստատելու, վասն զի երկուքն ալ իմ զաւակներս են։ Հայոց ազգը թող վստահ լինի որ իմ կայսերական համակրանքս՝ միշտ պիտի տարածի իր վրայ. գիտէ ինք (տեղապահն) թէ՝ ինչ եղանակաւ պիտի կատարէ իր պարտականութիւններն։»

Կը տեսնէք որ Նորին Կայսերական Վեհափառութիւնը կը բարեհաճի յիշել իր վաղեմի հայ Ժողովուրդն՝ որ այնչափ գարերէ ի վեր սրտագին ապաւինած կը գտնուի Օսմանեան Գահուն։ Պարտաւոր եմք յաւելուլ որ Կայսերական կառավարութիւնն թարգման Նորին Վեհափառութեան սոյն թանկագին զգացմանց՝ փութացած է բացորոշ հրահանգներ ուղղել առ դաւառական իշխանութիւնս, որպէս զի ընեն ինչ որ անկ է իրենց՝ վերահաստատելու համար Ժողովրդեան զանազան դասերուն, և ի մասնաւորի Իսլամաց և Հայոց մէջ վաղեմի վստահութիւնն, և բառնալու այն ամեն արգելքներն՝ որ ցարդ խանգն եղան երկրագործական, վաճառականական և առեւտրական գործառնութեանց, և միով բանիւ ապահովելու ամենուն՝ օրինաց պաշտպանութիւնն և կայսերական իշխանութեանց հոգածութիւնն։

Հետեւարար կաղաչեմք որ մէ՛ Ձեր և թէ՛ Ձեր իրաւասութեան ենթակայ Եկեղեցեաց մէջ ընթեռնուք մեր շրջաբերականն, որպէս զի բարձրաձայն հռչակուի Նորին Կայսերական Վեհափառութեան այս ուեռաւոր բանախօսութիւնը, և միանգամայն իւրաքանչիւրս ամենապարագայի մէջ մերնախահարց օրինակին հետեւելով՝ ի գործ դնէ ամեն նախազգոյշ միջոցներ՝ որք կը ծառայեն Տէրունական վստահութիւնն անխախտ պահելու, զի այնու միայն կարելի է Իսլամ՝ ժողովրդեան հետ հաստատել եղբայրական յարաբերութիւն և ընդունիլ Կայսերական Իշխանութենէն զեղն ու գարմանը, դիմելով անոր բարձրագոյն խընամից։

Մնամք աղօթարար
Պ-որբ-ի-ա-ն տեղապահ
ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

31 Յուլիս 1896

Ազգ. Պատրիարքարանէն հետեւեալն հաղորդուած է մեզ ի հրատարակութիւն.

«Ազգ. Պատրիարքարանի դիւանատան կողմէ՝ ըստ հրամանի Բարձրաբանորհ Տեղապահ Սրբազան Հօր՝ կը ծանուցուի թէ Նորին Սրբազնութիւնն յետ այսորիկ այցելութիւններն պիտի ընդունի երեքշաբթի և հինգշաբթի օրերն, կէս օրէ վերջ, հետեւապէս կը խնդրուի այս մտօք հարկ եղած զեկուցումն ընել Ձեր պատուական թերթի միջոցաւ։»

10 Օգոստոս 96 (Կնէ+)

Մէչտուճեան վարժարանի ամավերջի հրապարակային քննութիւնները յաջող կերպով տեղի ունեցան չարթուս և աւարտեցան երեքշաբթի օր։

Վիճակագրացները և վկայականները պարզ և վայելուչ հանդէսով մը բաշխուեցան հինգշաբթի առաւօտ, ի ներկայութեան վարժարանիս ուսուցչաց դասուն և ծնողաց ոմանց։

Մէչտուճեան վարժարանի այս տարուան շրջանաւարտներն են՝ Պարոնյաք Մանուել Էնֆիէճեան և Կարապետ Տ. Սէրլեմէրտի։

ՆԱՄԱԿ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՕՐԹԱԷԻՑ, 10 Օգստոս

Ձեր Պատ. Թերթին մէջ հանդիպեցայ կարդալու Տիկին Մատակեանի մէկ օգտակար գրութիւնը՝ որուն մէջ կը ջատագովէր նաև Սկիտարի Ս. Խաչ վարժարանի մէջ առաջին անգամ ըլլալով հաստատուած Սրուեստանոցի գրութիւնը և օրինակ ցոյց կուտար ուրիշ թաղերու ևս։

Պարտք կը սեպեմ ճշդելու սա կէտը թէ Ս. Թարգմանչաց վարժարանի Պատ. Խնամակալութիւնը արդէն վաղուց ծրագրած և վերջապէս հիմնած է Սրուեստանոց մը, որուն մէջ այս տարի միայն ստացագարդութեան ճիւղը աւանդուած է շնորհիւ Պ. Երուանդ Սահակեանի անձնուէր դասախօսութեան։

Օրթաքէօյ, անցեալին պակիներուն վերայ պառկած յոգնած մը չըլլալով, կը ջանայ պահել միշտ այս տեսակ հաստատութեանց առաջնութեան հաճոյքը։

ԹԱՂԵՈՍ ՄԸ

ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ԲԵՐԱՅԻ Ս. Զ Դ

Թագիս ազգ. վարժարանաց կրթ. Խնամակալութիւնն կը փութայ ծանուցանել թէ՝ Բերայի Նարեկեան և Բանկալթիի Լուսաւորչեան Մանկապարտէզներն, Ֆերիկեղի Մեսրոպեան և Տօրպա-Տէրէի Արշակունեաց Նախակրթարաններն պիտի բացուին ամսոյս 20ին, երեքշաբթի, նոյն օր պիտի ընդունուին աշակերտք և աշակերտուհիք ի վարժարան։

Ոնտի կը խնդրուի պատ. ծնողներէ որ հաճին ամսոյս 15, 18 և 19, հինգշաբթի, կիրակի և երկուշաբթի օրերը ներկայանալ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ խորհրդարանը, առաւօտեան ժամը 1-3 և իրենց որդւոց վարժարան ընդունուելու համար մտից տոմսը ստանալ։

Էսատեան վարժարանի, յետ ամառնային արձակուրդի, վերաբացման օրը յատուկ ազդարարութեամբ պիտի ծանուցուի։

* *

Բերայի մանկապարտէզներու համար վարժուհիներ պէտք ըլլալով՝ կը խնդրուի որ մանկապարտէզի վարժուհիութեան պաշտօն յանձն առնուլ փափաքողներն՝ իրենց վկայական ի ձեռին դիմեն վարժարանաց կրթ. Խնամակալութեան յառաջիկայ կիրակի առաւօտ, ժամը 2էն մինչեւ 4, Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ խորհրդարանը, իրենց պայմաններու մասին բանակցելու։

ԿՐԹ. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ազգ. Վարժարանաց Բերայի

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՖՊԻ, Խուլիս, 20 Յուլիս

Պատ. անձին կը համարիմ հրապարակային շնորհակալիքս յայտնել, զաւառացի աղքատ ուսանողաց համար դասագիրք հաւաքելու պաշտօն ունեցող յանձնաժողովին անդամաց որք Ֆրիի Խուլա գիւղի անառնախանձելի վիճակի մը ենթարկուած վարժարանիս կարօտ աշակերտներն ալ կարող ազգայիններու ուշադրութենէն չվրիպեցուցին։

Պոլսէն զրկուած ցուցակին 393 կտոր գիրք նշանակուած էր, բայց մենք 391 կտոր գտանք ընդ ամենը. Կիրեւի թէ այս փաքրիկ սխալը անուշադրութեան մը հետեւանքն է։ Հաճեցէք, Խմբագիր Տէր, գիւղիս ազգատ ուսանողաց երախտեացը թարգման ըլլալ, և խնդրելով Աստուծմէ կար և կարողութիւն,

Մնամ Աղօթարար
ՓԱՌՆԱԿ ԳԱՆԵ. ՏԷՐ ՄԿՐՏԻՉԵԱՆ
(Քպէ Խուլա-Գիւղ)

# Հեռագրական շաբաթ

ՄԷՔՎԱՈՒՏԻ հանդէսը շաբաթ օրը մեծ շքով տեղի ունեցաւ։ Վեհ. Սուլթանը ժամ 5½ին Համիտիէ մզկիթը գնաց, որուն քակին մէջ բարեւի կեցած էին նախարարք և քաղաքային ու զինուորական բարձրատիճան պաշտօնատարք՝ ամենքն ալ համազգեստով։

Ն. Վեհափառութիւն մզկիթ մտնելուն կատարուեցաւ միջօրէի աղօթքը. յետոյ տեղի ունեցաւ Մարգարէին ծննդեան գրքին ընթերցումը։ Այդ միջոցին կայս. պատասան մառնոպատ Օսման պէյ մատոյց Վեհ. Սուլթանին՝ Մէկվուտի օշարակն և ուրիշ պաշտօնատարներ ալ նախարարաց ու բարձրատիճան պաշտօնատարներու։

Բ. Դրան արարողապետ Թէբրուլ պէյ և նուիրական վայրերու Թարգման Ահմէտ Սիա պէյ՝ արարողապետ Մլուենիր փաշի առաջնորդութեամբ՝ պատիւ ունեցան Վեհ. Սուլթանին ներկայանալու և մատուցին Մէջքէի Էմիր Շերիֆ Ամիրբէֆիգ փաշի մէկ գիրն և Մէջքէի Շեյխին կողմէ զրկուած սրմանները։

Հանդէսն աւարտելէ յետոյ Վեհ. Սուլթանը կայս. պալատան առջեւի քաշքը գնաց, ուրկից դուռնց ներկայ եղող հեռաւոր ու հեծեալ զօրաց կողմէ կատարուած զօրահանդէսը, որուն մասնակցեցան նաեւ Համիտիյէ հեծելազօրքերէն երկու գումարտակներ։

* *

Բոլոր զինուորաց ինչպէս նաեւ ժողովրդեան օշարակներ ու շաքարներ բաշխուեցան։

* *

